*Այս ցուցակից երևումէ, որ Ճամախուոյ վիճակումն կան 4 քաղաք 48 գիւղ, 6175 տուն, 2 վանք - 39 եկեղեցի, 38 քահանայ, 12 դպրոց 866 ուսանողք։

Գաղթատեղիք Անդրկասպեան աշխարհի 15, և կրպակատեարք 497։ Ձկնատեղիք (Վաթակայ) ի Սալեան 9. իսկ անձինք արական և իգական հայք 541, և ընտանիք 47։

Ըստ այսմ թէ Ճամախուոյ թեմի քաղաքներում և գիւղերում, և թէ Անդր-կասպեան աշխարհում, 38786 և Սալեանի ձկնորսատեղերում լան հայք, 38786 անձինք։

Բալախանի են. նոյնպէս Ղուբայ, և Դարբանդ և առաւելապէս Անդրկասպեան աշխարհի քաղաքներումն գտնվում են բաւական Հայեր զանազան գործերով զբաղուած, որոց մեծ մասը Ղարաբաղցիք են և Սիւնեցիք - զոր օրինակ, ըստ Նոր-Դար լրագրի № 199—1890 թիւ, միայն Բագուի մէջ կան օտարական Հայք այր ու կին, ոմանք անբնակք և ոմանք կրպակատեարք։ Ամենն Սեւ քաղաքն ու Բալախանին միասին 21567։ Այս ցուցակի գիւղերից երկուսի բնակիչքն այն է Զարխու, և Գերմախան գաղթած են Պարսկաստանից Սպահան մօտ իրենց 1820 և 1830 թուերից։ Քարքանջեցիք գաղթած են մի դար յառաջ, Պարսկաստանի Խոյ քաղաքից։ Գիւրջիվանցիք, և Գիւրջիլարցիք գաղթած են Վրաստանից 1820. մնացած ժողովրդեան մեծ մասն գաղթած են Ղարաբաղից 1810, իսկ փոքր մասն ըստ աւանդութեան են բուն Շիրուանցիք, որք են Մէյսարեցիք, Սաղիանցիք, Հընղարեցիք. Զարգալանցիք, եւայլն։

Ծանօթ.—ա. *Անքահանայ գիւղերի ժողովուրդը՝ հովումեն մերձակայ գիւղերի քահանայքն։

բ. Ճամախուոյ գիւղերի ժողովուրդը կարծես զգալով ուսման պէտքը ցանկան դպրոց ունել, բայց իրագործելն մեծ դժուարութեամբ՝ երբ դրամի պահանջ է յիշվում։

գ. Մատրասայ, Քիլվար, և Խաչմաս գիւղերի ժողովուրդը Թաթախսօս են, և նոր նոր՝ չնորհիւ դպրոցաց սկսել են Հայերէն խօսիլ։

դ. Ձեն հաշուած Սալիանի Վաթակայների (Ձկնատեղեաց) Հայերն։